

[333799]



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱՇԽԱՏԱՆՔԻ ԵՎ ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ՀԱՐՑԵՐԻ
ՆԱԽԱՐԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

«13» *Ապրիլ* 2018 թ.

N 119 -Ն

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻԱՅԻ
ԾՐԱԳԻՐԸ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ ԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Ընտանիքում բռնության կանխարգելման, ընտանիքում բռնության ենթարկված անձանց պաշտպանության և ընտանիքում համերաշխության վերականգնման մասին» օրենքի (այսուհետ՝ օրենք) 14-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ և 19-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետերով.

Հ Ր Ա Մ Ա Յ ՈՒ Մ ԵՄ՝

1. Հաստատել՝
 - 1) «Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրը»՝ համաձայն N 1 հավելվածի.
 - 2) «Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի կազմակերպման կարգը»՝ համաձայն N 2 հավելվածի:
2. Հանձնարարել՝
 - 1) օրենքով սահմանված աջակցության կենտրոնների տնօրեններին՝ յուրաքանչյուր տարի մինչև հաջորդ տարվա հունվարի 30-ը՝ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության (այսուհետ՝ նախարարություն) աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչություն ներկայացնել տեղեկատվություն՝ ընտանիքում բռնության ենթարկված և ընտանիքում բռնություն գործադրած անձանց հաշտեցման գործընթացի վերաբերյալ.
 - 2) նախարարության աշխատակազմի ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի վարչության պետին՝ սույն հրամանի 2-րդ կետի 1-ին ենթակետում նշված տեղեկատվությունը ստանալուց հետո հնգօրյա ժամկետում ամփոփել և

ներկայացնել ընտանիքի, կանանց և երեխաների հիմնահարցերի ոլորտը համակարգող նախարարի տեղակալին:

3. Սույն հրամանի կատարման նկատմամբ հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարի առաջին տեղակալ Ա. Մանուկյանին:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում 2019 թվականի հունվարի 31-ից:



Մ. ԹԱՆԴԻԼՅԱՆ

ԾՐԱԳԻՐ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻԱՅԻ

1. Ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի ծրագիրն (այսուհետ՝ ծրագիր) ուղղված է բռնություն գործադրած անձին հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրման, առողջության վերականգնման, վնասակար սովորույթներից (ալկոհոլամոլություն, թմրամոլություն, թունամոլություն, խաղամոլություն) ձերբազատման միջոցով նրա կողմից կրկին բռնություն գործադրելու կանխմանը:

2. Ծրագրի նպատակն՝ ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից կրկին բռնություն գործադրման կանխումն է, ընտանիքում բռնության նոր դրսևորումների կանխարգելումը, ընտանիքի՝ որպես հասարակության բնական ու հիմնական բջջի պաշտպանությունը և պահպանումը:

3. Ծրագրի խնդիրներ են.

1) ընտանիքում բռնություն գործադրած անձանց հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրելու միջոցով վարքի փոփոխությունը.

2) ընտանիքում բռնություն գործադրած անձանց առողջության վերականգնման միջոցով վնասակար սովորույթներից (ալկոհոլամոլություն, թմրամոլություն, թունամոլություն, խաղամոլություն) ձերբազատելը:

4. Ծրագրով նախատեսվում են համալիր միջոցառումներ ուղղված ընտանիքում բռնություն գործադրած անձանց վարքի փոփոխությանը և նրանց վնասակար սովորույթներից ձերբազատելուն:

5. Ծրագրի միջոցառումներն են.

1) ընտանիքում բռնություն գործադրած անձանց հոգեբանական և սոցիալական աջակցության տրամադրումը.

2) ընտանիքում բռնություն գործադրած անձանց բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական օգնության տրամադրումը:

6. Ծրագրով նախատեսված միջոցառումներն իրականացվում են սույն հրամանի N 2 հավելվածով սահմանված կարգով:

7. Ընտանիքում բռնություն գործադրած անձանց հոգեբանական և սոցիալական աջակցությունը տրամադրվում է օրենքով սահմանված աջակցության կետրոնների (այսուհետ՝ աջակցության կետրոն) կողմից՝ ընտանիքում բռնություն գործադրած անձի գնահատված կարիքների հիման վրա կազմված անհատական ծրագրով:

8. Ընտանիքում բռնություն գործադրած անձանց բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական օգնությունը տրամադրվում է բժշկական կամ մասնագիտացված այլ հաստատության կողմից՝ ընտանիքում բռնություն գործադրած անձի առկա

ցուցումներին համապատասխան: Ըստ անհատական կարիքների որոշվում է նաև բժշկական, այդ թվում՝ հոգեբուժական օգնության տրամադրման ժամկետները և իրականացման կարգը:

9. Ընտանիքում բռնություն գործադրած անձանց հոգեբանական և սոցիալական աջակցություն միջոցառման շրջանակներում նախատեսվում են հետևյալ ծառայության տեսակները.

1) **կրթական կամ հոգեբանական ծրագրեր**, որոնք ուղղված են սոցիալ-մշակութային նորմերի և արժեքների փոփոխությանը (կնոջ և տղամարդու դերերի վերաբերյալ ոչ արդիական, ավանդական կարծրատիպերն ու պատկերացումներ, հայրիշխանական կարծատիպերի վրա հիմնված դաստիարակություն և կրթություն, մարդու իրավունքների վերաբերյալ գիտելիքների պակաս).

2) **ընտանեկան խորհրդատվություն և հոգեթերապիա**, որոնք ուղղված են ընտանիքում միջանձնային հարաբերությունների փոփոխությանը (ընտանեկան հարաբերությունների կառուցման ոչ կիրթ և գրագետ մոտեցում, փոխըմբռնման բարդություններ, ծնողավարության, երեխայի դաստիարակության վերաբերյալ պատկերացումների անհամապատասխանություն և այս գործընթացում դերակատարների միջև իշխանության բաշխման խնդրով պայմանավորված փոխհարաբերություններ).

3) **անհատական խորհրդատվություն և հոգեթերապիա**, որոնք ուղղված են ընտանիքում բռնություն գործադրած անձանց ագրեսիայի հաղթահարմանը (բռնության միջոցով ազդեցության և վերահսկողության հաստատում, սեփական կամքի թելադրում, բռնության վարքագծային մոդելի վերարտադրություն, անցյալում տրավմատիկ փորձառություն, ներառյալ պատերազմական գործողություններին մասնակցություն).

4) **հոգեբանական խորհրդատվության շուրջօրյա թեժ գիծ**, որը տրամադրվում է այլ ծառայությունների հետ զուգընթաց, ուղղված է ընտանիքում բռնություն գործադրած անձանց վարքի փոփոխության կառավարմանը և վերահսկմանը:

10. Վերոհիշյալ ծառայությունները ներառվում են ընտանիքում բռնություն գործադրած անձանց անհատական ռեաբիլիտացիոն ծրագրում, հաշվի առնելով նրանց կարիքները և ընտանիքում բռնության յուրահատկությունները:

ԿԱՐԳ

ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի կազմակերպման հետ կապված հարաբերությունները:
2. Սույն կարգի նպատակն է՝ ընտանիքում բռնություն գործադրած անձանց ռեաբիլիտացիայի կազմակերպումը, որն ուղղված է սույն հրամանի N 1 հավելվածով սահմանված ծրագրի (այսուհետ՝ ռեաբիլիտացիոն ծրագիր) մաս կազմող համապատասխան աջակցություն տրամադրելուն:

II. ԸՆՏԱՆԻՔՈՒՄ ԲՈՒՆՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԱԴՐԱԾ ԱՆՁԱՆՑ ՌԵԱԲԻԼԻՏԱՑԻԱՅԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ

3. Աջակցության կենտրոնը պաշտպանության միջոցներ կիրառելու մասին որոշումների պատճենները ստանալուց հետո առավելագույնը հինգ աշխատանքային օրվա ընթացքում, գրավոր ծանուցում է ընտանիքում բռնություն գործադրած անձին ծրագրով ռեաբիլիտացիա անցնելու անհրաժեշտության մասին:
4. Սույն կարգի 4-րդ կետում նշված ծանուցումն ուղարկվում է անձի փաստացի բնակվելու (գտնվելու) վայրի հասցեով:
5. Աջակցության կենտրոնը սույն կարգի 4-րդ կետում նշված ծանուցման վերաբերյալ ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից յոթօրյա ժամկետում գրավոր համաձայնություն չստանալու դեպքում ռեաբիլիտացիոն ծրագրին մասնակցելու առաջարկը համարում է մերժված:
6. Պաշտպանական որոշման շրջանակում ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից ռեաբիլիտացիոն ծրագիր անցնելուց հրաժարվելու դեպքում աջակցության կենտրոնն այդ մասին ծանուցում է ոստիկանությանը:
7. Ռեաբիլիտացիա անցնելու համաձայնության դեպքում ընտանիքում բռնություն գործադրած անձը հնգօրյա ժամկետում հրավիրվում է աջակցության կենտրոն՝ կարիքների գնահատման և անհատական ռեաբիլիտացիոն ծրագիր կազմելու նպատակով:

8. Առողջության վերականգնման և վնասակար սովորություններից՝ ակտիվաճանդությունից, թմրամոլությունից, թունամոլությունից, ձերբագատվելու նպատակով աջակցության կենտրոնը ընտանիքում բռնություն գործադրած անձին ուղղորդում է համապատասխան բժշկական կամ մասնագիտացված այլ հաստատություն՝ ռեաբիլիտացիա կազմակերպելու նպատակով:
9. Ընտանիքում բռնություն գործադրած անձին բժշկական կամ մասնագիտացված այլ հաստատություն ուղղորդելու դեպքում աջակցության կենտրոնը նախապես տվյալ անձի վերաբերյալ գրավոր ծանուցում է ուղարկում նշված հաստատություններին:
10. Ընտանիքում բռնություն գործադրած անձին հոգեբանական և սոցիալական աջակցություն տրամադրելու նպատակով աջակցության կենտրոնը կազմում է անհատական ռեաբիլիտացիոն ծրագիր՝ սույն հրամանի N 1 հավելվածով հաստատված ծրագրի շրջանակում:
11. Անհատական ռեաբիլիտացիոն ծրագիրն իրականացվում է աջակցության կենտրոնի մասնագետների կողմից:
12. Ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից բժշկական կամ մասնագիտացված այլ հաստատությունում ռեաբիլիտացիա անցնելու վերաբերյալ աջակցության կենտրոնը կատարում է հարցում՝ ռեաբիլիտացիայի գործընթացի նկատմամբ հսկողության իրականացման նպատակով:
13. Ընտանիքում բռնություն գործադրած անձի կողմից ռեաբիլիտացիա անցնելու վերաբերյալ տեղեկությունները հաղորդվում են ոստիկանություն:

Faint, illegible text, likely bleed-through from the reverse side of the page.

